Շնորհավորական ուղերձներ հոբելյարին

Մեծարգո տիար Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, գերագույն հոգևոր խորհրդի անդամ

Երևան

Մեծարգո պրն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ենք հղում Ձեզ և շնորհավորում ծննդյան տարեդարձի ուրախալի առիթով:

Ձեր կյանքի այդ հանգրվանը Դուք դիմավորում եք մեր Հայրենիքին, հայ գիտության զարգացմանը, երիտասարդ սերնդի կրթության գործին և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն մատուցած երկարամյա ծառայությունների հարուստ վաստակով:

Բերելով Ձեզ մեր գնահատանքը, աղոթում ենք, որ Ամենակալ Տերն Իր Սուրբ Աջի Ամենախնամ հովանու ներքո պահի ու պահպանի Ձեզ և Ձեր սիրեցյալ ընտանիքին՝ շնորհելով քաջառողջ կյանքի երկար տարիներ, գործոց հաջողություններ և երկնապարգև ամենայն բարիք:

Օրհնությամբ՝ ԳԱՐԵԳԻՆ Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍԻ

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ պանծալի հոբելյանի՝ ծննդյան 75-ամյակի կապակցությամբ:

Արցախում բարձր ենք գնահատում Ձեր՝ մեր ժողովրդի արժանավոր զավակի ավանդը հայրենի երկրի զարգացման ու բարգավաճման, աշխարհին նրան ճանաչելի դարձնելու գործում:

Արցախում հիշում են նաև այն, որ գոյապայքարի ողջ ընթացքում Դուք կանգնած եք եղել հարազատ ժողովրդի կողքին՝ ուժերի ներածին չափով աջակցելով պատերազմի հետևանքով ավերված գյուղերի ու քաղաքների վերակառուցմանը և տնտեսության վերականգնմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորում ենք Ձեզ և մաղթում քաջառողջություն, խաղաղություն ու ամենայն բարիք:

Խորին հարգանքով՝ Բակո ՍԱՀԱԿՅԱՆ
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ

ք. Ստեփանակերտ, 1 մայիսի, 2011 թ.

Մոսկվայից

Մեծարգո Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ընդունեցեք մեր սրտագին շնորհավորանքները Ձեր 75-ամյակի առթիվ: Ինձ համար մեծ ուրախություն է Համահայկական համաշխարհային Կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության և անձամբ իմ անունից մաղթել Ձեզ՝ ականավոր ֆիզիկոս գիտնականին, Հայաստանի ճշմարիտ հայրենասերին, նոր արարումներ գիտության և հասարակական գործունեության ասպարեզներում, քաջառողջություն և ընտանեկան երջանկություն:

Մենք հպարտությամբ ենք նշում Ձեր անձնական անգնահատելի ներդրումը ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ասպարեզներում նոր ուղղությունների ստեղծման գործում, որոնք միջազգային արժանի ճանաչում են ստացել:

Կրկին ամբողջ հոգով մաղթում եմ Ձեզ բեղմնավոր գործունեություն՝ ի բարօրություն հայ գիտության և մեր հայրենիքի:

Ուրախ եմ Ձեզ հաղորդել, որ Ռուսաստանի հայերի միության վարչության որոշմամբ, Դուք, թանկագին Ռադիկ Մարտիրոսյան, պարգևատրվել եք Ռուսաստանի հայերի միության «Ոսկե խաչ» շքանշանով:

Հարգանքներով՝ Արա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Господину Радику Мартиросяну
Президенту Национальной академии наук Армении

Республика Армения Ереван

Уважаемый Радик Мартиросович!

Сердечно поздравляю Вас с 75-летием.

В Республике Беларусь Вас знают как крупного ученого и авторитетного государственного деятеля. Вы умеете гармонично и плодотворно сочетать научную и организационную работу, обладаете глубокими и разносторонними знаниями, несете высокую ответственность за большой академический коллектив.

Ваше стремление к развитию белорусско-армянского научно-технического сотрудничества, инициативная и всесторонняя поддержка партнерских контактов между нашими странами во многом формируют направления взаимных интересов в областях науки и экономики Армении и Беларуси.

Желаю Вам, уважаемый Радик Мартиросович, Вашим родным и близким крепкого здоровья, долголетия, новых творческих успехов и свершений. Процветания Национальной академии наук Армении.

С уважением, Михаил Мясникович

Մոսկվայից

Թանկագին Ռադիկ Մարտիրոսյան

Ձեր 75-ամյա հոբելյանի օրը Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի Վ. Ա. Կոտելնիկովի անվան ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի կոլեկտիվը սրտանց շնորհավորում է Ձեզ և հղում իր ջերմ բարեմաղթանքները:

Մենք ճանաչում ենք Ձեզ որպես ռադիոֆիզիկայի և քվանտային էլեկտրոնիկայի ասպարեզի խոշորագույն գիտնական, որի աշխատությունները ստացել են բարձր գնահատական և համաշխարհային ճանաչում:

...Հոբելյանական այս օրը, թանկագին Ռադիկ Մարտիրոսի, ընդունեք մեր ամենաջերմ բարեմաղթանքները: Մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն, բարեկեցություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, հարգարժան պարոն Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատեհ համարելով առիթը, ցանկանում եմ շնորհավորել Ձեզ՝ ծննդյան յոթանասունհինգերորդ տարեդարձի կապակցությամբ:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, բարօրություն և կյանքի բոլոր ասպարեզներում մաղթում հաջողություններ և հաղթանակ:

Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղաիյան

ԳԱԱ հրատարակչության, գիտական հանդեսների և թերթի խմբագրությունների աշխատակիցները սրտանց միանում են շնորհավորանքներին: Ակադեմիական գրահրատարակության ոլորտում Ռ. Մ. Մարտիրոսյանի անմիջական նախաձեռնությամբ իրականացված կառուցվածքային փոփոխությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին այս ոլորտի բնականոն գործունեության համար: Գոհունակությամբ փաստելով այս իրողությունը մաղթում ենք նրան քաջառողջություն, արգասաբեր գործունեություն և նորանոր հաջողություններ բոլոր ասպարեզներում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին շնորհավորել են նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, ՀՀ ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և շատ-շատ ուրիշներ: Տեղի սղության պատճառով այդ շնորհավորանքները Նյու Յորքից, Մոսկվայից, Երևանից, մենք հնարավորություն չենք ունեցել հրապարակելու, որի համար հայցում ենք ձեր ներողամտությունը: